ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

93-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 72 (24625), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودوسوم - شماره (۲۴۶۲۵) ۷۲ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԵՔՇԱԲԹԻ

16 ԱՊՐԻԼԻ 2024

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

سه شنبه – ۲۸ فروردین ۱۴۰۳

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ՅԱՋՈՐԴ ԱՊՏԱԿՆ ԱՒԵԼԻ ՇԱՌԱՋՈՒՆ Է ԼԻՆԵԼՈՒ

Բաղերի Քանին զգուշացրել է.

«Իրանի պատասխանը վայրկեանական է լինելու»

(Տես 8-րդ էջում)

ՀՈՒ խօսնակ.

«Ոտքներդ վերմակից երկար չ'ձգէք»

(Տես 8-րդ էջում)

Քորբի.

«ԱՄՆ-ն չի ցանկանում պատերազմ Իրանի հետ, բայց ամէն ինչ կանի Իսրայէլին պաշտպանելու համար»

(Տես 8-րդ էջում)

Իսրայէլի պաշտպանութեան նախարար.

«Մենք այլ ելք չունենք, քան Իրանի դէմ պատասխան քայլեր ձեռնարկելը»

(Տես 8-րդ էջում)

Իշխան Սաղաթէլեան.

«Ռուսներին դարձրել են ՀՀ ինքնիշխանութեան սպառնալիք ու ոչ մի թթու խօսք Ադրբեջանի ու Թուրքիայի հասցէին»

Սրա վարած քաղաքականութեան արդիւնքում կորցնում ենք մեր դաշնակիցներին եւ նոր դաշնակից ձեռք չենք բերել: Այս մասին Վայքի բնակիչների հետ հանդիպմանը նշել է ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանը:

«Այն քաղաքականութիւնը, որ փոխենք երկրի արտաքին քաղաքական վեկտորը, եւ Արեւմուտքը կապահովի մեր անվտանգութիւնը, Արեւմուտքը բացայայտ եւ ուղիղ ասում է՝ ես ձեր անվտանգութիւնը ապահովել չեմ կարող: Մենք Ռուսաստանի հետ ունենք ռազմավարական դաշնակցային պայմանագիր, մենք ունենք մի շարք հնարաւորութիւններ մեր յարաբերութիւնները կարգաւորելու, վերականգնելու, փոխվստահութեան մթնոլորտի մէջ մեր անվտանգային հարցերը լուծելու:

Իրանի հետ ունենք բազմաթիւ հնարաւորութիւններ: Իրանը բազմաթիւ անգամ յայտարարել է, որ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնն իր համար կարմիր գիծ է: Հայաստանին բազմաթիւ առաջարկներ են արւել, որը մերժել է այս իշխանութիւնների կողմից, որովհետեւ սա խամաճիկ կառավարութիւն է:

Մենք չենք քննարկում՝ Արեւմուտքը լաւ է, թէ վատ է, մենք ասում ենք, որ դա անիրատեսական է: Խաբում է ձեզ, ազատ վիզա, բարեկեցիկ կեանք, ընդամէնը մի քննարկում է եղել Հայաստանին ԵՄ անդամի դիտորդի կարգավիճակի: Եթէ այդ ճանապարհը վերցնենք, 20 տարի է պէտք դրան հասնելու համար, իսկ այս իրավիճակում պետութիւնը չի լինի»,- ասաց Սաղաթէլեանը:

Նա նկատեց, որ ապրիլի 5-ին Բրիւսէլում տեղի ունեցած հանդիպմանն ամէն ինչի մասին խօսել են, բացի Հայաստանի անվտանգութեան խնդրից. «ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարը եկաւ Երեւան, ոչ մի խօսք Հայաստանի անվտանգութեան մասին, ոչ մի խօսք ագրեսոր Ադրբեջանի գործողութիւնների մասին, որի զօրքերը գտնւում են ՀՀ ինքնիշխան տարածքում:

Այս իշխանութիւնն այսօր ռուսներին դարձրել է Հայաստանի ինքնիշխանութեան սպառնալիք, ոչ մի թթու խօսք Ադրբեջանի ու Թուրքիայի մասին»,- յայտարարեց պատգամաւորը:

Yerkir.am

ՀՀ-ում ԻԻՀ դեսպանութիւն.

«Իրանն ընդգծում է իր հաստատակամութիւնը՝ վճռականօրէն պաշտպանելու իր ինքնիշխանութիւնը եւ ազգային շահը»

Իրանն ընդգծում է իր հաստատակամութիւնը՝ վճռականօրէն պաշտպանելու իր ինքնիշխանութիւնը եւ ազգային շահը: Այս մասին ասւած Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանութեան տարածած յայտարարութեան մէջ:

«Իրանի Իսլամական Հանրապետութեան պաշտպանական եւ համաչափ գործողութիւնները եւ գրաւեալ Պաղեստինում որոշ ռազմական օրինական կենտրոնների թիրախաւորումը իրականացել է պաշտպանութեան իրաւունքի շրջանակներում՝ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդւածի համաձայն եւ ի պատասխան սիոնիստական ռեժիմի ռազմական յարձակման, դիւանագիտական անձեռնամխելի վայր հանդիսացող Դամասկոսում Իրանի Իսլամական Հանրապետութեան հիւպատոսութեան թիրախաւորման եւ ահաբեկչական խմբաւորումների դէմ պայքարելու նպատակով Սիրիայի կառավարութեան հրաւէրով Սիրիայում ներկայ գտնւող ԻԻՀ ռազմական խորհրդատուների նահատակման:

Սիոնիստական ռեժիմի գործողութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ միջազգային կոնւենցիաների խախտում էր, որն արժանացաւ բոլոր երկրների եւ միջազգային կազմակերպութիւնների անմիջական արձագանգին եւ խիստ դատապարտմանը: Իրանի Իսլամական Հանրապետութեան՝ օրինական պաշտպանութեան իրաւունքի իրացման գործում պաշտպանական միջոցների դիմելը զսպող միջոց է եւ ցոյց է տալիս Իրանի պատասխանատու մօտեցումը տարածաշրջանային ու միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան նկատմամբ, իսկ Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ նրա շահերի դէմ ցանկացած նոր արկածախնդիր եւ անխոհեմ գործողութեան հետեւանքների

(Շար. 8-րդ էջում)

«Երբ ես սկսեցի սիրել ինքս ինձ, ես հասկացայ, որ տխրութիւններն ու տառապանքներն ընդամէնը զգուշացնող ազդանշաններ են այն մասին, որ ապրում եմ իմ սեփական ճշմարտութեանը հակառակ: Այսօր ես գիտեմ, որ դա կոչւում է իսկութիւն»

Չարլզ Սպենսեր Չապլին (1889-1977), աշխարհահռչակ կինոդերասան, կատակերգու, սցենարիստ, երգահան եւ ռեժիսոր

Ապրիլ 16-ը Չարլի Չապլինի ծննդեան օրն է

ARAM®
coffee
ԱՐԱՄ
սուրճ
قهوه آرام
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Յակոբ Բադալեան.

«Վտանգաւոր յայտարարութիւն, հիանալի եւ արագ կառուցւող «գործնական փաստարկ»՝ Թուրքիային»

Քաղաքական վերլուծաբան Յակոբ Բադալեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.

«ԱԺ պաշտպանութեան, ներքին գործերի եւ անվտանգութեան հարցերի յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը արել է շատ վտանգաւոր յայտարարութիւն: Նրա խօսքով, վարչապետն իբրեւէ ուզում է անուն առ անուն հաւաքել ցեղասպանութեան ենթարկուած մեր 1,5 միլիոն հայրենակիցների անուն-ազգանունները, նրանց հետ կատարածի տեղը, վայրը եւ այլն՝ յիշատակը ամբողջութեամբ յաւերժացնելու համար:

Առերեւոյթ կարող է թւալ, թէ սա կարեւոր նախաձեռնութիւն է: Եւ գուցէ իսկապէս կարեւոր է, եթէ այդ նախաձեռնութեան մասին չբարձրաձայնի ոչինչ, բացարձակապէս ոչինչ, իսկ այն շատ շատ ներքին կարգով պարզապէս յանձնարարի ԳԱԱ որեւէ կառոյցի, թէկուզ Ցեղասպանութեան թանգարան ինստիտուտին, որպէս գիտական, ոչ թէ պետական աշխատանքի առարկայ:

Երբ այդ աշխատանքը բարձրաձայնւում է, այն էլ պետականօրէն, ապա դրանով ստեղծւում է մի «փաստարկի» հիմք, թէ՝ ցեղասպանութեան զոհերի թիւը այնքան է, որքան կայ անուն:

Բոլորն են թերեւս պատկերացնում, թէ անուն առ անուն 1,5 միլիոն մարդու պատմութիւն վերականգնելը, աւելի քան հարիւր տարի անց, բազմաթիւ օբիեկտիւ ու սուբիեկտիւ հանգամանքների եւ իրողութիւնների, նաեւ Հայաստան պետութեան ինքնուրոյն կարողութիւնների սահմանափակուածութեան պարագայում՝ երբ արխիւների գերակշռող մասը թերեւս այլ պետութիւններում են, ինչ ահռելի գործ է: Եւ թերեւս դժուար չէ պատկերացնել, թէ անգամ իրադարձութիւնների ամենաբարենպաստ դասաւորութեան պայմաններում ինչ հսկայական ժամանակ է պահանջելու այդ գործը, կրկնեմ, եթէ ինչ որ իդէալական դասաւորութեան պայմաններում հնարաւոր լինի տեսականօրէն աւարտել այն երբեւէ:

Իսկ մինչ այդ, հիանալի եւ արագ կառուցւող «գործնական փաստարկ» է ստանալու Թուրքիան:

Եւ մնում է միայն տարակուսել, որ այդ փաստարկի «նախերգանքը» հնչում է ցեղասպանութեան տարելիցից տասն օր առաջ»:

AntiFake.am-ի խմբագրութիւնը դատապարտում է Հայաստանում ազատ խօսքը լռեցնելու գործողութիւնները

Երէկ՝ ապրիլի 15-ին, ոստիկանութեան ծառայողների կողմից վարչական ձերբակալութեան են ենթարկուել եւ Ոստիկանութեան Դաւթաշէնի բաժին են տարուել AntiFake.am-ի աշխատակիցներ, «AntiFake Զրոյց» հաղորդման վարող Դաւիթ Ֆիդանեանը եւ օպերատոր Իշխան Խոսրովեանը, որոնք, ըստ ոստիկանութեան՝ տեղեկատուական թռուցիկներ են փակցրել AntiFake.am կայքի հիմնադիր, «Քաղաքացիական գիտակցութիւն» ՀԿ ղեկավար, «Իմնեմնիմի» փողքասթի համահեղինակ եւ վարող, քաղբանտարկեալ Նարեկ Սամսոնեանի եւ նոյն փողքասթի համահեղինակ եւ վարող, հանրային գործիչ, քաղբանտարկեալ Վազգէն Սաղաթէլեանի ապօրինի կալանաւորման վերաբերեալ:

Այս մասին յայտարարութիւն է տարածել AntiFake.am-ի խմբագրութիւնը:

«Նրանց նկատմամբ կազմել է վարչական արձանագրութիւն ՎԻՉՕ 172.2 յօդուածով:

Յիշեցնենք, որ «Իմնեմնիմի» փողքասթի համահեղինակներ եւ վարողներ Նարեկ Սամսոնեանը եւ Վազգէն Սաղաթէլեանը ձերբակալուել են մարտի 22-ին եւ կալանաւորուել են երկու ամիս ժամկէտով փողքասթի 83-րդ թողարկման ընթացքում Նիկոլ Փաշինեանի յանձնողական քաղաքականութեան վերաբերեալ սուր գնահատականներ հնչեցնելու համար:

Քաղբանտարկեալներ Սամսոնեանն ու Սաղաթելեանն արդէն 25 օր անազատութեան մէջ են:

AntiFake.am-ի խմբագրութիւնը դատապարտում է Հայաստանի Հանրապետութիւնում ազատ խօսքը լռեցնելու, մեդիագործունէութեամբ զբաղւող երկու հանրային գործիչների՝ քաղբանտարկեալներ Նարեկ Սամսոնեանի եւ Վազգէն Սաղաթէլեանի ապօրինի կալանաւորման մասին հանրութեանը իրազեկելու փորձերը ճնշելու իշխանութեան հետեւողական գործողութիւնները:

Կոչ ենք անում իրաւապաշտպան կառոյցներին եւ լրագրողական կազմակերպութիւններին գնահատական տալ Հայաստանում խօսքի ազատութեան իրաւունքն ու ազատ մամուլը ճնշելու իշխանութեան նոր թափ առած քաղաքականութեանը»,- նշուած է հաղորդագրութեան մէջ:

News.am

Անյայտ անձինք հրկիզել են Ֆրեզնոյի «Արարատ» հայկական գերեզմանատունը, որտեղ թաղուած են Թեհլիրեանն ու Սարոյեանը

«ԱԼԻՔ» - Ապրիլի 12-ի երեկոյեան անյայտ անձինք հրկիզել են Ֆրեզնոյում «Արարատ» հայկական գերեզմանատունը, որտեղ հանգչում են բազմաթիւ հայ ականաւոր գործիչներ, այդ թւում՝ Սողոմոն Թեհլիրեանը եւ Վիլիամ Սարոյեանը:

Գերեզմանատունը յունուարի կէսից ի վեր հրկիզողների թիրախ է դարձել. ընդհանուր առմամբ տեղի է ունեցել վեց միջադէպ: Վերջինը գրանցուել է ապրիլի 12-ի գիշեր, երբ հրկիզուել է ութ ծառ գլխաւոր մուտքի մօտ:

Դէպքի վայր են ժամանել Ֆրեզնոյի ոստիկանութիւնն ու հրշէջ ծառայութիւնը, սակայն որեւէ ձերբակալութիւն տեղի չի ունեցել:

Հրդեհները տեղի են ունեցել գերեզմանատան ամենահին հատուածում, որը հիմնադրուել է 1885 թւականին: Դարպասներն ու կամարը յստակ վկայում են, որ գոյքը հայկական է:

Կատարածը մտահոգիչ է՝ հաշուի առնելով, որ մօտենում է Ապրիլի 24-ը՝ Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օրը եւ չի բացառուում, որ սա կարող է լինել ատելութեան հողի վրայ յանցագործութիւն:

Յիշեցնենք, որ Ֆրեզնոյի «Արարատ» հայկական գերեզմանատունը միակ հայկական գերեզմանատունն է Հայաստանից եւ Մերձաւոր Արեւելքից դուրս:

Լեւոն Քոչարեան.

«Արցախ վերադարձի հարցում միջազգային կոնսենսուս գոյութիւն ունի»

Իշխանութիւններն ուղիղ յայտարարում են, որ արցախցիների Արցախ վերադարձի հարցն իրենց օրակարգում չկայ. սա այն քիչ հարցերից է, որի շուրջ աշխարհում իրար դէմ հակամարտող կողմերը կարծես թէ նոյն ձեւ են մտածում, մինչդեռ Հայաստանի իշխանութիւնն այդ ուղղութեամբ ոչ մի քայլ չի ձեռնարկում: Այս մասին Վայքի բնակիչների հետ հանդիպմանը նշել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լեւոն Քոչարեանը:

«Մենք նոյն արձագանգը լսում ենք ամերիկացիներից, ռուսներից ու եւրոպացիներից. Նրանք բոլորն էլ ասում են, որ մարդիկ պէտք է ունենան վերադառնալու իրաւունքը, պէտք է ունենան անվտանգութեան ամենաբարձր երաշխիքները, հակառակ դէպքում չեն գնայ, բայց դրանից չի խօսում ՀՀ իշխանութիւնը: Այս ամէնի յետեւից գնացողը պէտք է լինի ՀՀ իշխանութիւնը: Եթէ իրենք դա չեն անում, հասկանալի չէ, թէ ոնց պէտք է դա արւի»,- ասաց նա:

Լեւոն Քոչարեանի խօսքով՝ սուտ են ասում իշխանութիւնները, երբ յայտարարում են, թէ իգուր ենք 30 տարի պայքարել, մէկ է՝ վերջը այսպէս էր լինելու. «Այն, ինչը ունեցել ենք, պահել ենք, դա եղել է նպատակաուղղուած աշխատանքի արդիւնքում»,- ասաց ընդդիմադիր պատգամաւորը:

Նշենք, որ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներն ապրիլի 13-ին այցելել են Վայոց Ձորի մարզ, հանդիպումներ ունեցել Վայքի եւ Եղեգնաձորի բնակիչների հետ, քննարկել երկրում ստեղծուած իրավիճակը, պատասխանել նրանց յուզող հարցերին:

News.am

Տիգրան Աբրահամեան.

«Բանակին նման ծանր հարուած հասցնելն այս իշխանութեան հակապետական դրսեւորումներից է»

«Ազգային ժողովում փակ ֆորմատով քննարկումից իմ տպաւորութիւնն այն է, որ գործող իշխանութիւնն անգամ այն պարագայում, երբ գիտի որ այս կամ այն քարտէզի, իրաւական բազայի հետ կապուած Հայաստանը այս կամ այն շրջանում ունեցել է առաւելութիւն, բայց Ադրբէջանը չի ընդունում Հայաստանի համար բարենպաստ քարտէզը կամ իրաւական հիմքը, գնում է ադրբէջանական մօտեցումը ընդունելուն: Սա է իշխանութեան դիրքորոշումը, մօտեցումը եւ հեռանկարը»,- խորհրդարանական ճեպազրոյցների ընթացքում ասաց ՀՀ ԱԺ «Պատիւ ունեմ» խմբակցութեան քարտուղար Տիգրան Աբրահամեանը:

Հարցին, թէ Փաշինեանը տաւուշեան այցի ընթացքում յայտարարել էր, որ եթէ այդ տարածքները չտանք՝ պատերազմ կը լինի, արդեօք Ադրբէջանի մօտեցումներում փոփոխութիւն կայ, քանի որ մօտ մէկ ամիս է անցել այդ այցից, բայց, բարեբախտաբար, պատերազմ չկայ՝ Աբրահամեանը պատասխանեց, որ ամենավտանգաւոր հանգամանքն այստեղ այն է, որ ՀՀ իշխանութիւնները սեփական ժողովրդի հետ խօսում են շանտաժի, սպառնալիքի ու ահաբեկման եղանակով:

«Այսինքն, իբր, գնում են մարդկանց հետ խօսելու, իրավիճակ ներկայացնելու, բայց դա այլ կերպ, քան ահաբեկչութիւն որակել չի կարելի: Եթէ դա լինէր փակ քննարկում՝ հասարակութեան քիչ մասը կը հաւատար՝ մտածելով, թէ ինչպէ՞ս կարելի է գնալ՝ հասնել այնտեղ ու յայտարարել, որ մեր բանակը պատրաստ չէ պատերազմի: Այսինքն, բանակին նման ծանր հարուած հասցնելը այս իշխանութեան հակապետական դրսեւորման ոչ եզակի դրսեւորումներից մէկն է: Այն մարդիկ, ովքեր առնչւում են բանակին, ովքեր տիրապետում են ԶՈՒ-ին՝ գիտեն, թէ ինչ ազդեցութիւն, ինչ ծանր հետեւանքներ կարող է ունենալ նման հարուածը»:

Անդրադառնալով պատերազմին, որ խոստանում էր Փաշինեանը՝ Աբրահամեանն ասաց, որ կարծում է, որ իշխանութիւնները ծանօթ են այն հարցումներին, որ հրապարակուեցին այդ այցից յետոյ: «Ըստ այդմ մեր բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը դէմ էր, այսպէս կոչուած, սահմանային ճշգրտումների այն տարբերակին, որը առաջ է քաշում իշխանութիւնը: Այդ 4 գիւղերի հետ կապուած գործընթացը սահմանազատում եւ սահմանազրծում համարել չի կարելի: Ըստ էութեան՝ դրանով զբաղւող փոխվարչապետի գրասենեակը եւս համարեց, որ դա սահմանազտում չի լինելու, ուստի այլ բան, քան միակողմանի զիջում, դա չէր կարելի անուանել:

Հիմա իշխանութիւնը համարում է, որ այդ գործընթացները, որոնք կարող են իրեն ծանր հարուած հասցնել իրենց իշխանութեանը, դրա համար էլ դա պէտք է ձգձգել»:

Միաժամանակ, նա ընդգծեց, որ իշխանութիւնները վստահաբար ծանօթ են նաեւ իրենց միւս նախաձեռնութիւններից յետոյ հասարակութեան շրջանում առաջացած դժգոհութիւններին: «Դրանց մի մասը թւացել է՝ կենցաղային են, տարբեր նշանակութիւն ունեցող հարցեր են, բայց դրանց նկատմամբ մեր հասարակութեան ճնշող մեծամասնութեան վերաբերմունքը եղել է ծայրայեղ բացասական: Կարծում եմ՝ սա է հիմնական խնդիրը, որ իշխանութիւնը հիմա փորձում է իրավիճակը շտկել ու դաշտ մտցնել կեղծ օրակարգեր»:

Yerkir.am

Հիմա ի՞նչ ուղերձ են յղում քաղաքացիները կառավարութեանը

ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

Անցած տարւայ սկզբին, երբ ծնելիութիւնը Հայաստանում մի պահ աւելացել էր, Նիկոլ Փաշինեանն առիթը չկորցրեց ու յայտարարեց, թէ սա քաղաքացիների ուղերձն է կառավարութեան կողմից իրականացւող քաղաքականութեանը:

Ուզում էր ասել՝ ի հեճուկս հոռետեսների, քաղաքացիները վրստահում են կառավարութեան իրականացրած քաղաքականութեանը, Հայաստանում տեսնում են ապագայ, դրա համար էլ սկսել են աւելի շատ երեխաներ ունենալ:

«2023 թ. առաջին չորս ամիսների ընթացքում Հայաստանում ծնւել է 11926 երեխայ, ինչը 1401-ով աւելի է, քան 2022 թ. առաջին չորս ամիսներին, 532-ով աւելի է, քան 2021 թ. առաջին չորս ամիսներին, 1469-ով աւելի է, քան 2020 թ. առաջին չորս ամիսներին, 1415-ով աւելի է, քան 2019 թ. առաջին չորս ամիսներին, 1180-ով աւելի է, քան 2018 թ. առաջին չորս ամիսներին:

Այս թւերը ես ընկալում եմ՝ որպէս քաղաքացիների կողմից կառավարութեանը հասցէագրած ուղերձ, որոնք յաճախ չեն հնչում ամբիոններից, բայց ունեն վճռորոշ նշանակութիւն:

Եւ առաջիկայ մեր քաղաքականութիւնները հիմնւած են լինելու այս ուղերձների վրայ»,- յայտարարեց Նիկոլ Փաշինեանը:

Համարենք, որ այն ժամանակ Նիկոլ Փաշինեանը ճիշտ էր ընկալել քաղաքացիների ուղերձը: Այդ դէպքում հարց է առաջանում՝ այժմ ի՞նչ ուղերձ են յղում քաղաքացիները կառավարութեանը, երբ հակառակն է տեղի ունենում՝ ծնելիութիւնը նւազում է:

Եւ ինչո՞ւ միայն ծնելիութիւնը. բնակչութեան բնական շարժի բոլոր հիմնական ցուցանիշերը վատացել են:

Ոչ միայն ծնելիութիւնն է նւազել, այլեւ մահերն են աւելացել: Բնակչութեան բնական յաւելաճն է կրճատւել, այն էլ՝ բաւական մեծ տեմպով՝ 2,4 անգամով:

Պաշտօնական տուեալներով, տարեսկզբի առաջին երկու ամիսներին ծնելիութիւնը Հայաստանում 7,4 տոկոսով պակասել է:

Եթէ նախորդ տարի ծնւել էր 5914 երեխայ, այս տարի ծնւել է 5477-ը՝ 437-ով քիչ, քան անցած տարի:

Գուցէ ասի Նիկոլ Փաշինեանը, թէ հիմա սրանով ի՞նչ ուղերձ են յղում քաղաքացիներն իշխանութիւններին ու իր կառավարութեան իրականացրած քաղաքականութեանը, արդեօք վստահո՞ւմ են երկրի ապագայի վերաբերեալ իրենց տեսլականին, թէ՞ չեն վստահում, հաւատո՞ւմ են, որ Հայաստանում ապագայ կայ, թէ՞ չեն հաւատում: Եթէ հաւատում են, ինչո՞ւ է Հայաստանում կրճատւել ծնելիութիւնը, ինչո՞ւ են մարդիկ խուսափել աւելի շատ երեխաներ ունենալ: Դրանով ի՞նչ ուղերձ են փոխանցում կառավարութեանը: Ծնելիութեան կրճատումը կառավարութեան իրականացրած քաղաքականութեան նկատմամբ վստահութե՞ն, թէ՞ անվստահութեան արտայայտութիւն է:

Այս հարցերին, բնականաբար, Նիկոլ Փաշինեանը չի անդրադառնալու: Բայց առանց դրա էլ շատ բան վաղուց այլեւս պարզ է, քաղաքացիները վստահութիւն չունեն Նիկոլ Փաշինեանի իշխանութեան ու կառավարութեան կողմից իրականացւող քաղաքականութեան նկատմամբ:

Դրա վկայութիւններից մէկն էլ վերջերս հրապարակած սոցիոլոգիական հարցման արդիւնքներն են, որոնց համաձայն՝ կառավարութեան ղեկավարի վստահութիւնը հասել է պատմական մինիմումի:

Նիկոլ Փաշինեանի աշխատանքից լիովին գոհ է հարցւածների ընդամէնը 8 տոկոսը:

Մէկ տարի առաջ գոհերի քանակը 16,2 տոկոս էր. կրկնակի կրճատւել է:

Նոյնիսկ նախկին «թալանչի» եւ «ոչ ժողովրդավար» ղեկավարները երբեւէ այդպիսի ցածր ռէյտինգ ու վստահութիւն չեն ունեցել, ինչպիսին, այս հարցման արդիւնքներով, ունի Նիկոլ Փաշինեանը:

Ծնելիութեան կրճատումը եւս կառավարութեան ու կառավարութեան ղեկավարի իրականացրած քաղաքականութեան նկատմամբ քաղաքացիների անվստահութեան արտայայտութիւններից մէկն է: Մարդիկ չեն հաւատում երկրի ապագայի վերաբերեալ կառավարութեան քաղաքականութեանը:

Եւ ինչպէ՞ս պէտք է հաւատան ու վստահեն, երբ տեսնում են, թէ ինչ է կատարւում: Չկայ անվտանգութեան ոչ մի երաշխիք, երկրի տարածքները քայլ առ քայլ յանձնում են թշնամուն:

Թշնամին աւելի է մխրճւում Հայաստանի խորքերը՝ ստեղծելով նոր ռիսկեր անվտանգութեան առումով:

Այս ամէնը քիչ է, երկիրը ներքաշել են աշխարհաքաղաքական մեծ խաղերի մէջ: Աշխարհում տեղի ունեցող գլոբալ փոփոխութիւնների պայմաններում՝ ժամանակ են գտել կողմնորոշումները վերանայելու համար:

Ամէն ինչ այնպէս են խառնել, որ ոչ մեկը չի կարող ասել, թէ ինչ կը լինի վաղը: Ոչ մի բանի վրայ վստահութիւն ու երաշխիք չկայ: Մարդիկ չեն կարող անգամ մի քանի օրւայ կտրւածքով պլանաւորել իրենց ապագան: Համատարած բացասական սպասումներ են ու բացարձակ անորոշութիւն, ինչին, անշուշտ, ադեկւատ է նաեւ քաղաքացիների ուղերձն ու վերաբերմունքը կառավարութեան իրականացրած քաղաքականութեանը:

Այսպիսի պայմաններում բնակա՞ն չէ, որ մարդիկ հակւած չեն լինելու հեռահար նպատակներ դնել, ոչ միայն իրենց, այլեւ իրենց երեխաների ճակատագիրը կապել մի երկրի հետ, որի ապագան այս իշխանութիւնների ձեռքով դարձել է անկանխատեսելի, անորոշ ու անյայտ:

Ահա, թէ ինչի պատճառով է, որ ծնելիութիւնը նւազել է:

Փոխարէնը՝ մահերն են աւելացել:

Պաշտօնական տուեալներով՝ այս տարւայ առաջին երկու ամիսներին Հայաստանում 4914 քաղաքացի է մահացել:

Սա 363-ով կամ 8 տոկոսով աւելին է, քան անցած տարի էր:

Անցած տարւայ նոյն ժամանակահատւածում 4551 քաղաքացի էր մահացել:

Մի կողմից՝ ծնունդներն են կրճատւել, միւս կողմից՝ մահերն են աւելացել:

Արդիւնքում՝ բնակչութեան բնական յաւելաճն անցած տարւայ 1363-ից նւազել է մինչեւ 563-ի:

Կրճատւել է նաեւ ամուսնութիւնների քանակը:

Այս ամէնը քաղաքացիների ուղերձն է՝ ուղղւած իշխանութիւններին ու կառավարութեան քաղաքականութեանը: Ու երբ Նիկոլ Փաշինեանն անցած տարի յայտարարում էր, որ առաջիկայ իրենց քաղաքականութիւնները հիմնւած են լինելու քաղաքացիների ուղերձների վրայ, ապա սրանից հետեւութիւնն աներկբայ է՝ քաղաքացիները չեն վստահում իշխանութիւններին ու կառավարութեան քաղաքականութեանը:

Ի դէպ, չնայած անցած տարւայ սկզբին Նիկոլ Փաշինեանը խօսում էր վերջին տարիների կտրւածքով ծնելիութեան բարձր ցուցանիշերի ու դրանով քաղաքացիների կողմից կառավարութեանն ուղղւած ուղերձի մասին, տարեվերջին արձանագրւեց ծնելիութեան կրճատում:

168.am

Գառնիկ Դանիէլեան.

«Միակողմանի զիջումները թշնամուն հնարաւորութիւն են տալու օղակի մէջ առնել Հայաստանը»

Վերջին օրերի իրադարձութիւններով պայմանաւորւած՝ փոխւել է բոլորիս բնականոն կեանքն ու առօրեան: Այս մասին «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիէլեանը:

«Որպէս Տաւուշը ներկայացնող պատգամաւոր, այսօր ուզում եմ անդրադառնալ չորս բնակավայրերը զիջելու՝ մեզ պարտադրւող օրակարգին:

Ցաւօք, մեր այն մտավախութիւնը, որ Արցախի սցենարը կարող է կրկնւել Հայաստանի Հանրապետութիւնում, այս իշխանութիւնների մնալու պարագայում կարող է ի կատար ածւել:

Միակողմանի, անօրինական, հակասահմանադրական զիջումները, որոնք պարտադրւում են Հայաստանի գործող իշխանութիւններին, թշնամուն հնարաւորութիւն են տալու օղակի մէջ առնել Հայաստանը՝ վերածելով մեր Հանրապետութիւնը իւրատեսակ անկլաւի»,- գրել է նա:

Ժողովրդի 95 տոկոսը դէմ է Տաւուշի գիւղերն Ադրբեջանին յանձնելուն



Հասարակութիւնը դէմ է իշխանութիւնների կողմից Տաւուշի չորս գիւղերն Ադրբեջանին յանձնելուն, եւ ընդհանրապէս՝ առանց համաձայնեցւած քարտէզների սահմանազծում անելուն: «Փաստինֆո»-ն աւանդական դարձած հարցումների շրջանակներում հետաքրքրւել է, թէ արդեօք քաղաքացիները համամիտ են, որ սահմանազծումը կարելի է կատարել՝ առանց համաձայնեցւած քարտէզների: Մենք արձանագրել էինք, որ Երեւանի եւ Բաքւի միջեւ չկայ համաձայնեցում, թէ որ քարտէզների հիման վրայ պէտք է իրականացւի սահմանազատումը, ինչի մասին յայտարարել է թէ՛ փոխվարչապետ Մհեր Գրիգորեանը, թէ՛ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, չնայած դրան՝ Նիկոլ Փաշինեանը յայտարարել է, որ պատրաստ է Տաւուշի չորս գիւղերը յանձնել Ադրբեջանին:

Հարցմանը մասնակցել է 4000 քաղաքացի, որոնց բացարձակ մեծամասնութիւնը՝ 95 տոկոսը, դէմ է այդ գործընթացին՝ նշելով, որ նախ պէտք է քարտէզները համաձայնեցւեն: Մնացեալ 5 տոկոսը հաւասարաչափ է բաշխւել, մի մասը կողմ է եղել, միւս մասը՝ դժւարացել է պատասխանել: Քաղաքացիները նաեւ քննարկումներ են ծաւալել՝ զարմանք յայտնելով, թէ առհասարակ ինչպէս կարող է նման գործընթաց սկսւել, եթէ ադրբեջանցիները ՀՀ սուվերէն տարածքում են գտնւում, ինչպէս կարող է որեւէ մէկը միանձնեայ որոշել ամբողջ ազգի ճակատագիրը՝ հողերը յանձնելով թշնամուն: Մէկ այլ քաղաքացի էլ արձանագրել է, որ եթէ որեւէ այլ երկրում նման բան լինէր, ապա երկրի ղեկավարը վաղուց կալանաւորւած կը լինէր:

Փերիոյ գաւառի «Լուսահանգիստ» սրբավայրում տեղի ունեցաւ ամենամեայ հոգեհանգստեան արարողութիւնը

Ուրբաթ՝ ապրիլի 12-ի առաւօտեան, Սպահանի Փերիոյ գաւառի «Լուսահանգիստ» սրբավայրում տեղի ունեցաւ ամենամեայ հոգեհանգստեան կարգը, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան արք. Քէչէճեանի եւ մասնակցութեամբ եկեղեցականաց դասի:

Արարողութեան աւարտին Սրբազան Հայրն անդրադառնալով 17-րդ դարում այս վայրում ածիւնները հանգիստ առած, քրիստոնէութեան հաւատի ճանապարհի նահատակ Գրիգոր Արփայեցու կեանքին, ինչպէս նաեւ Բուրվառ շրջանից Նուրիջան անունով մի այլ հաւատացեալ նահատակի կենսագրականին, պատգամեց օրինակ վերցնելով յիշեալ սրբերից ապրել քրիստոնէական դաստիարակութեամբ եւ իսկական հաւատով ապրել ու պահպանել կրօնը: Նա նաեւ կոչ արեց ծնողներին նոյն բարոյագիտութեամբ դաստիարակել մատաղ սերնդին:

Այնուհետեւ ուխտաւորներն աղօթեցին, մոմ վառեցին եւ խունկ ծխեցին նահատակի գերեզմանի վրայ:

Թղթակից (Նոր Ջուղա)

ԴԱՏԱՊԱՐՏԱԳԻՐ

Սիոնիստական ռեժիմի դաժան յարձակումը Սիրիայի Դամասկոս քաղաքում Իրանի Իսլամական Հանրապետութեան հիւպատոսութեան շէնքի վրայ, որը յանգեցրել է այս երկրի զաւակների նահատակութեան, խստօրէն դատապարտում ենք:

Այս կեղծ վարչակարգի պատմութիւնը անմեղ մարդկանց սպանութեան եւ մարդասիրական ու դիւանագիտական բոլոր չափանիշերը խախտելու վրայ է հիմնուած եւ այս յարձակումը մանկասպան վարչակարգի թուլութիւնն ու անկումն է ցոյց տալիս:

Չենք կասկածում, որ սիոնիստների սեւ անցեալն ու յանցագործութիւնները՝ անմեղ եւ անպաշտպան մարդկանց դէմ կատարած տեղահանումն ու սպանութիւնը եւ յաջորդական անյաջողութիւններից յետոյ, աշխարհի մարդկանց մօտ համաշխարհային ատելութիւն եւ նողկանք է առաջացրել, ինչը արդէն վկայում է նրանց անկման մասին:

Ի վերջոյ, անձնապէս մեր եւ Ատրպատականի հայոց թեմի Թեմական խորհրդի անունից ցաւակցում ենք երկրի գերագոյն առաջնորդ այաթ. Խամենէին, Իրանի Իսլամական Հանրապետութեան համակարգի յարգարժան պատասխանատուներին, ժողովրդին եւ նահատակների ընտանիքներին, եւ աղօթում ենք առ Աստուած խաղաղութիւն ու համբերութիւն պարգեւի նրանց եւ ինչու չէ յարձակման հետեւանքով վիրաւորածների շուտափոյթ ապաքինման համար:

Աղօթարար՝
ԳՐԻԳՈՐ ԱՐՔ. ՉԻՖԹԵԵԱՆ
Առաջնորդ
Ատրպատականի հայոց թեմի

06.04.2024

Մայրերի տօնը նշուեց՝ Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի յարկի ներքոյ



Կիրակի՝ ապրիլի 3-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ. Մ. «Արարատ» միութեան Շահինշահիրի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ եւ նոյն մասնաճիւղի Մշակութային միաւորի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Մայրերի տօնին նուիրուած միջոցառում:

Օրուայ բացման խօսքն արտայայտեց Էմմա Օրդուբէգեանը, ով շնորհաւորանքի խօսքից յետոյ բարձր գնահատեց հայ կնոջ եւ մօր դերակատարութիւնը ազգի եւ հայրենիքի պաշտպանութեան, ինչպէս նաեւ ընտանիքի ամրապնդման գործերում: Նա յատկապէս անդրադարձ կատարելով Արցախից բռնի կերպով տեղահանուած ժողովրդին, ընդգծեց արցախահայ մայրերի հերոսութիւնները, ովքեր պատրաստ են իրենց անկոտրում կամքով իրականացնել արծրւաբոյն հայրենիքում վերապրելու երազանքը:

Շարունակութեան մէջ Վարդուհի Պողոսեանը մասնաճիւղի վարչութեան անունից շնորհաւարանքի խօսք եւ բարեմաղթանքներ ուղղեց բոլոր մայրերին:

Ծրագիրը յագեցած էր հայկական տարազների եւ ուտեստների թեմաներով խաղ-մրցոյթներով, խրախճանքով եւ հիւրասիրութեամբ:

Յատկանշական է, որ ներկաները սրահ մուտք գործելիս ստացան կրծքանշաններ, որոնցով մասնակից դարձան նաեւ օրուայ վիճակահանութեանը:

Թղթակցութիւնը կազմեց
օրաթերթի Նոր Ջուղայի թղթակիցը՝
կազմակերպիչների զեկոյցի
համաձայն
Լուսանկարները՝
Գեւիկ Խաչատրեան

ՄԱՐԶԱԿԱՆ

«Բայեր»-ը պատմութեան մէջ առաջին անգամ Գերմանիայի չեմպիոն է

Լեւերկուզենի «Բայեր»-ը պատմութեան մէջ առաջին անգամ դարձաւ Գերմանիայի ֆուտբոլի առաջնութեան չեմպիոն:

Բունդեսլիգայի 29-րդ տուրում «Բայեր»-ը սեփական յարկի տակ ընդունելով Բրեմենի «Վերդեր»-ին՝ առաւելութեան հասաւ 5:0 հաշուով:

Լեւերկուզենը ներկայացնող թիմը հաւաքեց 79 միաւոր՝ անհասանելի դարձաւ երկրորդ տեղում ընթացող «Բաւարիա»-ի համար եւ իր պատմութեան մէջ առաջին անգամ դարձաւ Գերմանիայի չեմպիոն:

«Բայեր»-ը անպարտելի է ընթացիկ մրցաշրջանում:

Հիմնադրուելով 1904 թւականին, «Բայեր»-ն առաջին անգամ է դառնում Բունդեսլիգայի յաղթող: Թիմը հինգ անգամ դարձել էր լիգայի փոխչեմպիոն:

Լեւերկուզենի ներկայիս մարզիչ՝ Չաւի Ալոնսօն, պատմութեան 7 մասնագէտներից մէկն է, ով Գերմանիայի չեմպիոն է դարձել թէ՛ ֆուտբոլիստի, թէ՛ մարզչի կարգավիճակում:

Nike-ը կը տուգանի «Բարսելոնա»-ին վատ արդիւնքների համար

«Բարսելոնա»-ի եւ Nike-ի միջեւ կնքուած պայմանագիրը տուգանքներ է ներառում: Այս մասին յայտնում է Sport.es-ը:

Ակումբը զրկւում է սարքաւորումների եւ պարագաների վաճառքի համար պահանջւող վճարումների տոկոսից:

«Կապտանռնագոյնները» տուգանւում են վատ արդիւնքների համար՝ 5%, եթէ չյաղթեն Լա լիգան, 10%՝ Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ դուրս չգալու դէպքում, 30%՝ Չեմպիոնների լիգայի խմբային փուլի ուղեգիր ձեռք չբերելու դէպքում, իսկ 60% եւրագաւաթներ դուրս չգալու դէպքում:

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Յայտնի է, որ ցաւազրկող դեղամիջոցն է բացասաբար անդրադառնում սրտամկանի վրայ

ԱՄՆ Կալիֆորնիայի համալսարանի գիտնականները պարզել են, որ օրգանիզմում ացետամինոֆենի (պարացետամոլի) տարրալուծումը կարող է յանգեցնել օքսիդացնող ստրեսի եւ սրտի համար վտանգաւոր տոքսինների կուտակման: Աշխատանքի արդիւնքները ներկայացած են Ամերիկեան ֆիզիոլոգիական ընկերութեան (APS) կայքում:

Համարւում է, որ պարացետամոլի՝ բազմաթիւ ցաւազրկողների ակտիւ բաղադրիչի օգտագործումը վնասակար կողմնակի ազդեցութիւնների վտանգ չի կրում, ուստի այն յաճախ նշանակւում է արեան բարձր ճնշում կամ սրտի հիւանդութիւն ունեցող մարդկանց ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի փոխարէն, ինչպիսին է իբուպրոֆէնը:

Նոր հետազօտութեան շրջանակներում գիտնականները որոշել են պարզել՝ արդեօք պարացետամոլն իսկապէս անվտանգ է: Նրանք գիտափորձ են անցկացրել լաբորատոր մկների մասնակցութեամբ, որոնց մի մասին չորս շաբաթ շարունակ ացետամինոֆէն պարունակող ջուր են տուել, իսկ միւս մասին միաւորել են վերահսկող խմբում:

7 օր անց գիտնականները պարզել են, որ պարացետամոլ ստացած մկների օրգանիզմում զգալի անցանկալի փոփոխութիւններ են տեղի ունեցել՝ կապւած էներգիայի արտադրութեան կենսաքիմիական ուղիների, հակաօքսիդանտների եւ բջջային «աղբի» հեռացման հետ: Մասնաւորապէս,

պարացետամոլի օգտագործումն ազդել է 20 տարբեր ազդանշանային ուղու վրայ:

Գիտնականները եկել են այն եզրայանգման, որ այս դեղամիջոցի երկարաժամկէտ օգտագործումը միջին եւ բարձր չափաբաժիններով կարող է սրտամկանի հետ կապած խնդիրներ առաջացնել օքսիդացնող ստրեսի եւ պարացետամոլի տարրալուծման ընթացքում օրգանիզմում տոքսինների կուտակման հետեւանքով: Այնուամենայնիւ, այս եզրակացութիւնների ճշտութիւնը հաստատելու համար մարդկանց մասնակցութեամբ աւելի շատ ուսումնասիրութիւններ են անհրաժեշտ:

Tert.am

Հայաստանի ներկայացուցիչները 5 մեդալ են նւաճել բռնցքամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում

Խրւաթիայում անցկացւած բռնցքամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում Հայաստանի ներկայացուցիչները նւաճել են երեք արծաթէ եւ երկու բրոնզէ մեդալ, յայտնում է ՀԲՖ-ի մամուլի ծառայութիւնը:

Արծաթէ մեդալ են նւաճել 51 կգ. քաշային Դաւիթ Սաֆարեանը, 92 կգ. քաշային Դաւիթ Սիմոնեանը եւ գերծանր քաշային Միսակ Տեպանեանը:

Հայաստանի հաւաքականի կազմում Էրիկ Առստամեանն ու Լուսիա Աւետիսեանը նւաճեցին բրոնզէ մեդալ:

Նշենք, որ շուտով Սերբիայում կայանալու է մեծահասակների Եւրոպայի առաջնութիւնը: Հայաստանը մրցաշարում ներկայացնելու է 19 մարզիկ:

Էլմիրա Կարապետեանը դարձել է Ռիո դէ Ժանէյրոյի միջազգային մրցաշարի յաղթող

Հայաստանի հրաձգութեան հաւաքականի անդամ Էլմիրա Կարապետեանը դարձել է Ռիո դէ Ժանէյրոյի միջազգային մրցաշարի յաղթող:

Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարում Կարապետեանը 3-րդ տեղով դուրս գալով եզրափակիչ՝ դարձաւ մրցաշարի յաղթող: Եզրափակիչում հայ հրաձիգը 240,7 միաւորով առաջինն է:

Էլմիրա Կարապետեանը մինչ այս արդէն իսկ ունէր Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգիր:

Աւելի վաղ կայացել էր 10 մետր օդամղիչ ատրճանակ ձեւի զոյգերի պայքարը, որտեղ Էլմիրա Կարապետեան-Բենիկ Խլղաթեանը զոյգը միայն 5-րդն էր:

Հայաստանը Ռիոյի վարկանիշային այս մրցաշարում ներկայացած է երեք մարզիկով՝ Էլմիրա Կարապետեան, Բենիկ Խլղաթեան, Հրաչ Բաբայեան:

Panorama.am

ԱՐԿ.

«Նիգերիան առաջինն աշխարհում յեղափոխական պատւաստանիւթ է արտադրել մենինգիտի դէմ»

Աֆրիկայի ամենահոծ բնակեցւած երկիրը՝ Նիգերիան, դարձել է աշխարհի առաջին երկիրը, որը «յեղափոխական» պատւաստանիւթ է թողարկել մենինգիտի դէմ, տեղեկացրել է Առողջապահութեան Համաշխարհային կազմակերպութիւնը (ԱՀԿ):

«Մենինգիտը հին եւ մահացու թշնամի է, բայց այս նոր պատւաստանիւթն ունի հիւանդութեան տարածման հետագիծը փոխելու, ապագայ բռնկումները կանխելու եւ շատ կեանքեր փրկելու պոտենցիալ»,- ասել է ԱՀԿ գլխաւոր տնօրէն Թէդրոս Ադհանոմ Գեբրէյեսուսը:

«Նիգերիայում պատւաստանիւթի ներդրումը մեզ մէկ քայլ մօտեցնում է մեր նպատակին՝ մենինգիտի վերացմանը մինչեւ 2030 թ.»,- ասել է նա:

Men5CV պատւաստանիւթը պաշտպանում է մենինգոկոկային մանրէների հինգ հիմնական շտամներից (A, C, W, Y եւ X) մեկ ընդունմամբ:

ԱՀԿ-ն յայտնել է, որ այդ պատւաստանիւթը ապահովում է աւելի լայն պաշտպանութիւն, քան ներկայիս պատւաստանիւթը, որն օգտագործւում է Աֆրիկայի տարածքի մեծ մասում, եւ որն արդիւնաւէտ է միայն A շտամի դէմ:

Անցած տարի Աֆրիկայում մենինգիտի դէպքերի թիւն աւելացել էր 50 տոկոսով:

Նիգերիան, որի բնակչութիւնը կազմում է 220 մլն. մարդ, 26 երկրներից մէկն է, որտեղ բարձր է մենինգիտի համաճարակը Աֆրիկեան մենինգիտային գօտի կոչւող տարածքում:

ԱՀԿ-ն նշել է, որ 153 մարդ մահացել է Նիգերիայում մենինգիտի բռնկման ժամանակ՝ հոկտեմբերի 1-ից մինչեւ մարտի 11-ն ընկած շրջանում:

News.am

Աննահանջ պայքար
Անկոտրում կամք

109-րդ տարելիցի

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ապրիլեան ոգեկոչման ծրագրեր

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Միութիւն / կազմակերպ.	Զեռնարկ	Թւական	Ժամ	Վայր
Հ. Մ. «Արարատ» Կ.	Արթուր Մանուկեանի պատկառների ցուցահանդէս	Ապրիլի 18-26-ին	երեկ. ժամը 17:00-ին	Հ. Մ. Ա. Կ.-ի «Խաժակ Արզումանեան» ցուցասրահում
Թ. Հ. Թ. Կրթական խորհրդի նախաձեռնութեամբ	Միջնակարգ օղակի աշակերտների միջոցով ծաղիկների մատուցում եւ գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 21-ին	առ. ժամը 9:00-ին	Հ. Մ. Ա. Կ.-ի «Սասունցի Դաւիթ» սրահում
Նախակրթարան - մանկապարտէզ, տարրական դպրոցների եւ Մարմնա-մտային խանգարումներով հայ երեխաներին օժանդակող «Ակունք» կենտրոն	Ծաղիկների մատուցում	Ապրիլի 22-ին	առ. ժամը 9:00-ին	Ս. Սարգիս, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Թարգմանչաց եկեղեցիներում
Թեհրանի «Փերիոյ» Կրթասիրաց միութիւն	Յիշատակի երեկոյ	Ապրիլի 22-ին	երեկ. ժամը 19:30-ին	Հ. Մ. «Սիփան» միութեան «Նայիրի» սրահում
«Ռոստոմ» Երիտասարդական միութիւն	**Երիտասարդական համահաւաք**	**Ապրիլի 23-ին**	**երեկ. ժամը 19:30-ին**	**Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում**
Կենտրոնական յանձնախումբ	**Կրօնական արարողութիւն, ծաղիկների մատուցում եւ ժողովրդական համահաւաք**	**Ապրիլի 24-ին**	**առ. ժամը 9:00-ին**	**Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում**
«ՀՈՒՍԿ» հաստատութիւն	**Կենտրոնական ծրագիր՝ գեղարուեստական-բանախօսական երեկոյ**	**Ապրիլի 24-ին**	**երեկ. ժամը 19:30-ին**	**Հ. Մ. Ա. Կ.-ի «Սասունցի Դաւիթ» սրահում**
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Եկեղեցական խորհուրդ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Կիրակնօրեայ դպրոց, Հ. Մ. Մ. «Նայիրի» միութիւն, Ի. Ա. Մ. Մ., «Հայ կին» միութեան կից «Անահիտ» միութիւն, Աշխարհատեսների հայկական կենտրոն (Զէյթուն քաղաքամասի), Հայաստանեայց Առաքելական եկեղեցու հոգեւոր եղբայրակցութիւն	Գեղարուեստական ծրագիր եւ բանախօսութիւն	Ապրիլի 25-ին	երեկ. ժամը 19:00-ին	Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում
Հ. Մ. Մ. «Ռաֆֆի» համալիր	Գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 26-ին	երեկ. ժամը 18:00-ին	Միութեան «Մասիս» սրահում
Հայկական Բարեգործական ընդհանուր միութիւն (Հ. Բ. Ը. Մ.)	Գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 26-ին	երեկ. ժամը 19:00-ին	Միութեան սրահում
Հ. Մ. Մ. «Նայիրի» միութիւն	Գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 26-ին	երեկ. ժամը 19:30-ին	Միութեան «Արցախ» սրահում
Հ. Մ. «Սիփան» միութիւն	Գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 27-ին	երեկ. ժամը 19:30-ին	Միութեան «Նայիրի» սրահում
«Հայ կին» միութիւն	«Կրակէ շապիկ վէպ» ռադիոբեմադրութիւն	Ապրիլի 28-ին	երեկ. ժամը 16:00-ին	Հ. Ուս. «Զհարմահալ» միութիւն
Հ. Մ. «Սարդարապատ» Մ., «Հայ կին» միութեան կից «Անի» միութիւն եւ Սրբ. Վարդանանց եկեղեցու Եկեղեցական խորհուրդ	Գեղարուեստական ծրագիր, բանախօսութիւն եւ ֆիլմի ցուցադրում	Ապրիլի 28-ին	երեկ. ժամը 18:30-ին	Հ. Մ. «Սարդարապատ» միութեան սրահում
«ՀՈՒՍԿ» հաստատութիւն	Ոչ հայ հայրենակիցների համար	Ապրիլի 28-ին		Մուտքը հրաւէրով
Հ. Ուս. «Զհարմահալ» միութիւն եւ Իրանահայ Ուսուցիչների միութիւն	Բանախօսութիւն եւ գեղարուեստական ծրագիր	Ապրիլի 29-ին	երեկ. ժամը 19:00-ին	Միութեան «Յովհ. Թումանեան» սրահում
Իրանի Հայ Բժշկական միութիւն	Սեմինար Հրանտ Դինքի մօտեցումները Հայոց Ցեղասպանութեան կապակցութեամբ	Մայիսի 2-ին	երեկ. ժամը 18:30-ին	«Ռոստոմ» մշակութային համալիրի սրահում
Հայկական Բարեգործական ընդհանուր միութիւն (Հ. Բ. Ը. Մ.)	Գեղարուեստական ծրագիր եւ նկարչութեան ցուցահանդէս	Մայիսի 2-3-ին	երեկ. ժամը 19:00-ին	Միութեան սրահում
Հ. Մ. Մ. «Ռաֆֆի» համալիր	Ֆիլմի ցուցադրում	Մայիսի 3-ին	երեկ. ժամը 18:00-ին	Միութեան «Սայեաթ Նովա» սրահում
Իրանահայ Գրողների միութիւն	Գրական-գեղարուեստական ծրագիր	Մայիսի 3-ին	երեկ. ժամը 18:00-ին	«Ռոստոմ» մշակութային համալիրի սրահում

Թ. Հ. Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ՈԳԵԿՈՉՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Արժ. Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանին, Խոսրովեան եւ Մովսիսեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՏԻՐԱՄԱՅՐ՝
ԹԱԳՈՒՀԻ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ
(ԽՈՍՐՈՎԵԱՆ)

ցաւալի մահուան առթիւ:

«ԳՈՀԱՐ» ՄԻՋՆ. ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ,
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորագգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Արժ. Տ. Սահակ քհնյ. Խոսրովեանին, փիրահայր՝ Արշամ Խոսրովեանին, Խոսրովեան եւ Մովսիսեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

ՏԻՐԱՄԱՅՐ՝
ԹԱԳՈՒՀԻ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ
(ԽՈՍՐՈՎԵԱՆ)

ցաւալի մահուան առթիւ:

ՂԱԶԻՒՆԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑՈՒ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ
ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

آگهی استخدام

نمایندگی خودرو های (هیوندای و کیا)
واقع در تهران (منطقه ونک)

سمت	شرایط احراز شغل
کارشناس فنی مکانیک	فوق دیپلم مکانیک و بالاتر با سابقه کار
مکانیک خودرو	با سابقه کار (آشنایی با گیربکس اتوماتیک)
جلوبندی کار	با سابقه کار
برقکارخودرو و کولر	با سابقه کار
گیربکس کار اتوماتیک	با سابقه کار
پذیرشگر خودرو	با سابقه کار
راننده	متاهل - با سابقه کار
آبدارچی	متاهل - آقا

● آدرس ایمیل: Hyundai.iso243@gmail.com
● تلفن ثابت: ۸-۸۸۶۰۸۷۲۷-۰۲۱
● تلفن واتساپ: ۰۹۳۵۲۲۷۹۲۹۶

آگهی استخدام

نمایندگی خودرو های (هیوندای و کیا)
واقع در تهران (منطقه ونک)

سمت	شرایط احراز شغل
مهندس مکانیک خودرو	لیسانس و فوق‌لیسانس
مهندس برق خودرو	لیسانس و فوق‌لیسانس
مهندس صنایع	لیسانس و فوق‌لیسانس
حسابدار	لیسانس حسابداری- آشنا به قوانین حسابداری
کارمند حسابداری	دیپلم حسابداری و بالاتر با سابقه کار
فروش قطعات یدکی در نمایندگی	دیپلم و بالاتر
صندوقدار	دیپلم و بالاتر

● آدرس ایمیل: Hyundai.iso243@gmail.com
● تلفن ثابت: ۸-۸۸۶۰۸۷۲۷-۰۲۱
● تلفن واتساپ: ۰۹۳۵۲۲۷۹۲۹۶

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir
دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4
نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity
دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237
Մեկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով
دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարեայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով

خدایا تو بر کار خیرم بدار
باهم مهربانی را کامل کنیم.
*۷۳۳*۷*۱۸#
چشم‌انداز: جهانی بدون ترس از بیماری سرطان
ماموریت: برانگیختن امید به زندگی و حمایت از بیماران مبتلا به سرطان بدون محدودیت سن، ملیت، مذهب، جنسیت، نوع و مرحله بیماری سرطان و مشارکت در برنامه جامع ملی کنترل سرطان
موسسه خیریه بهنام دهش‌پور حمایت از بیماران مبتلا به سرطان
Behnam Dahshpour Charity Organization
behnamcharity.org.ir
behnamcharity

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
QeshmAir
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
IRAN ASEMAN AIRLINES
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը, իսկ
սկսած ապրիլի 16-ից (۲۸ فروردین) շաբաթ եւ երեքշաբթի օրերը յաւելեալ թռիչքներ են կատարւելու «Ասեման» աւիաընկերութեան միջոցով
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

Յարգելի նւիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նւիրատութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

Շնորհակալ ենք, որ Դուք կայք:

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

ՄԱՀԱԶԴ

Հայր իմ ես քեզ չեմ մոռանայ
Ու անունդ միշտ կը մնայ,
Սերունդներդ քեզ կը յիշեն
Ու միշտ կասեն մեծ մարդ էր նա:
Հայ ես եղել, հայր ես եղել
Մասիսի պէս վեհ ես եղել:

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



ՅՈՎԱԿԻՄ ՕՐՈՒՋԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ կիրակի, ապրիլի 14-ին:

Թաղումը կը կատարուի չորեքշաբթի, ապրիլի 17-ին, առ. ժամը 11:00-ին, Նոր Բուրասպան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 10:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Նարմաք, Հարաւային Շիրմարդ (Սոհէյլեան) պող., «Թունեան» դպրոցին կից:

Յաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ «Նայիրի» սրահում (Զարքեշ):

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Օրուջեան եւ Յովսէփեան ընտանիքներ հարազատները եւ բարեկամները:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ -۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

سرمایه گذار
جهت تولید
ماشین های لباسشویی صنعتی
ماشین سازی آوانسیان
خانم تهمورس ۰۹۳۹۲۹۴۰۴۰۷

Բաղերի Քանին զգուշացրել է.

«Իրանի պատասխանը վայրկեանական է լինելու»

«ԱԼԻՔ» - Իրանի պատասխանը սիոնիստական ռեժիմի հնարաւոր արկածախնդրութեանը լինելու է աւելի ուժեղ եւ վայրկեանական: Այս մասին Իրանի պետական հեռուստատեսութեան եթերում յայտարարել է քաղաքական հարցերով ԱԳ նախարարի տեղակալ Ալի Բաղերի Քանին:

«Դամասկոսի յանցագործութեան ժամանակ, սիոնիստները ռազմավարական սխալ թոյլ տուեցին: Նրանք օրինականութիւն ապահովեցին Իրանի ռազմական եւ պաշտպանական կարողութիւնների լուրջ փորձարկման համար: Եթէ այդ սխալը թոյլ չտային, այս պայմանները չէր ապահովի: Եթէ սիոնիստական ռեժիմի մօտ կայ ռացիոնալիզմ, ապա նրանք հերթական սխալ թոյլ չեն տայ»,- ասել է Բաղերի Քանին:

«Սխալը կրկնելու դէպքում, աւելի ուժեղ եւ անյապաղ պատասխան են ստանալու: Պէտք է իմանան, որ 12 օր ժամանակ չեն ունենալու. Իրանի պատսխանը վայրկեանական է լինելու»,- նշել է նա:

Աւագ դիւանագէտը վստահեցրել է, որ Իրանն այն պահին, երբ իր ազգային շահերից ելնելով որոշեց պատժել սիոնիստներին, արդէն պատրաստել էր նրանց ապագայ հնարաւոր չարագործութիւններին պատասխանելու համար. «Ուրեմն, պէտք է հասկանան, որ երբ թոյլ են տալիս նման սխալ եւ հարուածում են Դամասկոսում Իրանի հիւպատոսութեանն ու ստանում են նման պատասխան, ապա ինչ է կարող պատահել, եթէ փորձեն Իրանի տարածքի նկատմամբ ոտնձգութիւն կատարել: Պատասխանը հաստատ լինելու է աւելի ուժգին եւ ցաւոտ»,- յստակեցրել է Բաղերի Քանին:

ՁՈՒ խօսնակ.

«Ոտքներդ վերմակից երկար չ'ձգէք»

«ԱԼԻՔ» - «Ով, իր ոտքերը վերմակից երկար ձգի, մենք նրա ոտքերը կը կտրենք»,- յայտարարել է Զինուած ուժերի աւագ խօսնակը:

Անդրադառնալով արեւմտեան որոշ երկրների ղեկավարների՝ սիոնիստական ռեժիմին աջակցութեանը, գեներալ-մայոր Աբոլֆազլ Շեքարին ասել է. «ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի առաջնորդներին զգուշացնում ենք. դադարեցնե՛լ աջակցել Իսրայէլի նենգ, օրինազանց, ահաբեկչական ու մանկասպան ռեժիմին: Դուք լաւ գիտէք, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնն ապացուցել է, որ ռազմատենչ երկիր չէ եւ չի ձգտում պատերազմի:

Բայց եթէ որեւէ մէկը, այդ թւում՝ դուք եւ անհեռանկար ու անօգնական այդ ռեժիմը, իր ոտքերը վերմակից երկար ձգի, մենք կը կտրենք նրա ոտքերը»:

«Խորհուրդ ենք տալիս Իրանի օրինական գործողութիւնները դատապարտելու փոխարէն, խելամիտ լինեն եւ չաջակցեն ճահճում ընկղմուած, ապօրինի եւ ահաբեկչական այդ ռեժիմին ու կրակը չնետուել»,- նշել է գեներալը:

Քորբի.

«ԱՄՆ-ն չի ցանկանում պատերազմ Իրանի հետ, բայց ամէն ինչ կանի Իսրայէլին պաշտպանելու համար»

Միացեալ Նահանգները ներգրաւուած չէ Իրանի օդային յարձակմանը Իսրայէլի հնարաւոր պատասխանի մշակման մէջ, ասել է Ազգային Անվտանգութեան խորհրդի ռազմավարական հաղորդակցութիւնների համակարգող Ջոն Քորբին: Փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Մենք ներգրաւուած չենք նրանց հնարաւոր պատասխանի վերաբերեալ որոշումների կայացման գործընթացում»,- ասաց նա Սպիտակ տան ճեպազրոյցում:

Քորբին յաւելել է, որ, իր տեղեկութիւններով, Իսրայէլի ռազմական կաբինետը դեռ նման որոշումներ չի կայացրել եւ շարունակում է քննարկել «իր յաջորդ քայլերը»:

Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ն չի ցանկանում պատերազմ տեսնել Իրանի հետ, սակայն ամէն ինչ կանի Իսրայէլը պաշտպանելու համար:



«Մենք չենք ցանկանում պատերազմ Իրանի հետ: Մենք չենք ցանկանում տեսնել տարածաշրջանային հակամարտութեան ընդլայնում: Մենք կանենք այն, ինչ պէտք է անենք Իսրայէլը պաշտպանելու համար»,- ասել է Քորբին:

Իսրայէլի պաշտպանութեան նախարար.

«Մենք այլ ելք չունենք, քան Իրանի դէմ պատասխան քայլեր ձեռնարկելը»

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Եօաւ Գալանտը կիրակի օրը ԱՄՆ պաշտպանութեան նախարար Լլոյդ Օսթինին ասել է, որ Իսրայէլն այլ ելք չունի, քան արձագանգել Իրանի կողմից հանգստեան օրերին իրականացուած հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի աննախադէպ յարձակմանը:

Այս մասին Axios-ին յայտնել են ԱՄՆ պաշտօնեան եւ մէկ այլ աղբիւր:

Յիշեցնենք, որ Իրանը շաբաթ գիշերն իր տարածքից աւելի քան 300 հարուածային անօդաչու թռչող սարք եւ հրթիռ է արձակել Իսրայէլի ուղղութեամբ, ինչն Իսլամական Հանրապետութեան առաջին ուղիղ յարձակումն էր Իսրայէլի վրայ: Իսրայէլի պաշտպանութեան բանակի խօսնակ Դանիէլ Հագարին ասել է, որ ընդհանուր առմամբ Իրանը աւելի քան 300 զինատեսակ է արձակել Իսրայէլի ուղղութեամբ՝ 170 անօդաչու թռչող սարք, 30 թեւաւոր եւ 120 բալիստիկ հրթիռ, եւ որ դրանց 99%-ը որսացել է Իսրայէլի հակաօդային պաշտպանութիւնը:

Ըստ New York Times-ի, ԱՄՆ նախագահ Ջօ Բայդէնի հետ հեռախօսազրոյցից յետոյ Իսրայէլի վարչապետ Բենիամին Նեթանիահուն հրաժարուել է յարձակուել Իրանի վրայ: Որպէս պատճառ նշուել է իրանական հարուածի պատճառած համեմատաբար փոքր փասը:

ԱՄՆ նախագահ Ջօ Բայդէնն Իսրայէլի վարչապետ Բենիամին Նեթանիահուի հետ զրոյցում ասել է, որ Իրանի յարձակումն անյաջող էր եւ որ դա Իսրայէլի համար յաղթանակ էր:

Մինչդեռ Իրանի նախագահ Էբրահիմ Ռէյիսին յայտարարել է, որ Իսրայէլի ցանկացած նոր արկածախնդրութիւն կարժանանայ աւելի ծանր պատասխանի:

«Իրանն....

(Շար. 1-ին էջից)

պատասխանատուութիւնը կուղղի սիոնիստական ռեժիմին եւ նրա աջակիցներին:

Իրանի Իսլամական Հանրապետութիւնը վերահաստատելով իր հաւատարմութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ միջազգային իրաւունքի սկզբունքներին եւ նպատակներին՝ ընդգծում է իր հաստատակամութիւնը՝ վճռականօրէն պաշտպանելու իր ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ ազգային շահերը ցանկացած անօրինական ուժի եւ ագրեսիայի դէմ»,- ասուած է հրապարակուած յայտարարութեան մէջ: